ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հոգեբան, «Շվեդական Ապավեն» բժշկական ասոցիացիա

ՍԵՌԱՀԱՍՈՒՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՀՐՋԱՓՈՒԼՈՒՄ

Հոդվածում քննարկված են սեռահասունացման գործընթացների կարևորությունը սեռային ինքնագիտակցության ձևավորման և սեռադերային վարքի դրսևորման համար, ինչպես նաև քննարկված են անբավարար սեռային սոցիալիզացիայի պայմաններում արական և իգական սեռի ներկայացուցիչների սեռադերային նույնականացման դեստրուկցիայի դրևորման առանձնահատկությունները սեռահասունացման շրջափուլում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. սեռադերային, դեստրուկցիա, նույնականացում, օբյեկտ, սեռահասունացում, դեռահասություն, սոցիալիզացիա:

Դեռահասության շրջափուլում սեռահասունացումը կարևորագույն գործընթաց է, որով պայմանավորվում է դեռահասների սեռադերային ընկալումները, սեռային ինքնագիտակցության զարգացման առանձնահատկությունները:

Համաձայն Դ. Վ. Կոլեսովի և Ն. Բ. Սելվերովայի՝ մարդու սեռի խնդիրները հանդիսանում են սեռահասունացման խնդիրները: Եվ դրա համար նրանք կարևորում են սեռական հասունացման մասին ճիշտ պատկերացումները, որոնք սեռի խնդիրներն են բացահայտում և համարում են, որ սեռահասունացման գործընթացի արդյունքում օրգանիզմը հասնում է կանացի և տղամարդկային սեռին պատկանելու բարձրագույն աստիճանին [6, էջ 33–36]:

Ի. Ս. Կոնը նշում է, որ հորմոնալ ածը փոփոխություն է առաջացնում մարմնի կառուցվածքում, առաջացնում է նաև սեքսուալ ապրումներ, իսկ ֆիզիկական և հոգեսեքսուալ անհամաչափ զարգացումը խթանում է դեռահասին նորովի գնահատել ու իմաստավորել սեռական և սեքսուալ նույնությունը՝ սոմատիկ, հոգեբանական, վարքային բոլոր դրսևորումներով, որը որակապես փոխում է սեռական ինքնագիտակցությունը [7, էջ 200]:

Համաձայն Վ. Ե. Կագանի՝ սեռային ինքնագիտակցությունը գիտելիքների, անձնային մտքերի և նշանակությունների համակարգ է, որը միաժամանակ որոշակի սեռի ապրումներ և մոտիվացիա է ձևավորում [5]:

Ս. Խուդոյանը նշում է, որ դեռահասության փուլում ինքնագիտակցության արթնացում է տեղի ունենում և 3 տարեկանում արթնացած ինքնագիտակցությունը, նորից է արթնանում, որի մեջ սկսում է տարբերակվել սեռային կողմը: Դեռահասը սկսում է ընկալել իրեն որպես կին կամ տղամարդ: Եթե մինչև դեռահասության տարիքը սեռադերային վարքը ձևավորվում էր ինքնաբուխ ձևով, երեխան նպատակաուղղված գործունեություն չէր կատարում իր սեռի մեջ կայանալու կամ էլ սեռադերային վարքի նորմերը յուրացնելու նպատակով, ապա դեռահասության փուլում դեռահասի համար այս խնդիրները դառնում են հրատապ: Նախորդ շրջանի նման այս փուլում ևս երեխան սկսում է ակտիվորեն նմանակել մեծերի վարքը, սակայն այս գործընթացում շեշտը դրվում է կանացիության և առնականության կողմերի վրա [1, էջ 98–100]:

Ա. Դ. Անդրեևվան, Ն. Ի Գուտկինան, Ի. Վ Դուբրովինան և այլք նույնպես գտնում են,որսա այն ժամանակաշրջանն

է, երբ մանկական օրգանիզմը հենց այնպես չի դառնում մեծահասակ, այլ վերածվում է տղայի կամ տղամարդու, աղջկա կամ կնոջ, որը արտացոլվում է դեռահասի հոգեկան զարգացման և անձի ձևավորման մեջ [9, էջ 130]:

Համաձայն Մ. Վ. Գամեզոյի, Ե. Ա. Պետրովայի և Լ. Մ. Օրլովայի՝ դեռահասների սեռային դերի մասին կարելի է դատել հետևյալ ցուցանիշներով՝ հակառակ սեռի նկատմամբ հետաքրքրությունն է մեծանում, յուրահատուկ հոգեսեքսուալ գործունեություն է դրսևորվում՝ սեքսուալ բնույթի խաղեր, խնամք, տղաների մոտ մրցակցություն և մենամարտ, աղջիկների մոտ՝ կանացի շորերի նկատմամբ հետաքրքրություն, տնային գործերի նկատմամբ հատուկ վերաբերմունքի առկայություն [4, էջ 192]:

Դ. Ն. Իսաևը, Վ. Ե. Կագանը նույնպես գտնում են, որ դեռահասության փուլում սեռական նույնականացումը շարունակվում և վերջանում է, տեղի է ունենում սեռական դերերի ներքնայնացում, ձևավորվում են կանացիության և տղամարդկայնության դիրքորոշումները: Հակառակ սեռի նկատմամբ սեքսուալ կողմնորոշում է ձևավորվում, և մեծանում է սեքսուալ հետաքրքրությունը: Կանացիության տիպիկ գծեր են ի հայտ գալիս, որոնցից են՝ հոգատարությունը, կոնֆորմությունը, տղամարդկության գծերից ի հայտ են գալիս ագրեսիվությունը, մրցակցությունը, կոպտության նկատմամբ հակվածությունը [3]:

Այս մոտեցումներում կարևորվում են դեռահասության փուլի սեռահասունացման գործընթացների արդյունքում սեռային ինքնագիտակցության առկայությունը և սեռային դերերի յուրացումը համապատասխան նորմատիվ չափանիշների, որոնք բնութագրվում են ընդհանրություններով՝ համապատասխան հասարակական չափանիշների:

Սեռադերային ոչ համապատասխան սոցիալիզացիայի առկայության պայմաններում սեռադերային դեստրուկցիայի նշաններ են ի հայտ գալիս: Ավելի վառ և ավելի ակներև սկսում է դրևորվել դեռահասության տարիքի ներկայացուցիչների մոտ: Հատկապես սեռադերային համարժեք սոցիալիզացիայի համար շատ կարևոր են ընտանիքի, ինչպես նաև հասակակիցների, նաև միկրո և մակրոմիջավայրի այլ անձանց դերերը:

Վ. Ե.Կագանը կարևոր է համարում հոգեսեքսուալ սոցիալիզացիայի՝ ընտանիքի և հասակակիցների դերը, հատկապես կարևորում է դաստիարակությունը, որը պետք է լինի շատ ճկուն: Նա գտնում է, որ տղաների դաստիարակությունը կանացի մի ձեռքից մյուս ձեռքն է անցնում: Այսինքն՝ մասկուլինության նկատմամբ պահանջը բախվում է սոցիալական խոչընդոտին, որը առաջացնում է կամ սեռադերային լարվածություն կամ կորցնում է սեռադերային կողմնորոշումը: Դրա հետ մեկտեղ քչանում են նաև աղջիկների նկատմամբ ֆեմինինության պահանջները և աղջիկների սեռադերային կողմնորոշումը ավելի մասկուլինացված է դառնում [9]:

Բացի վերը նշվածից՝ ընտանիքներում ճիշտ չեն բաշխվում դերային մոդելները, ինչը դրսևորվում է ոչ լիարժեք ընտանիքներում, կամ լիարժեք, սակայն նույն սեռի ծնողական կերպարների հետ խաթարված են հարաբերությունները: Բացի դրանից՝ սեռային դաստիարակության անբավարար պայմանները նույնպես նպաստում են սեռադերային դեստրուկցիաների դրսևորմանը:

Սեռային նույնականության խանգարումը կամ դեստրուկցիան հակառակ սեռի հետ ուժեղ և կայուն նույնականացման ձգտումն է, որն ուղեկցվում է սեփական սեռի նկատմամբ անհարմարվողականության զգացողությամբ [10, էջ 493]:

Սեռադերային նույնականացման հասարակական պահանջների և ձևավորման ներքին մեխանիզմների, ինչպես նաև դրանց հնարավոր խանգարումների գործընթացի մասին ուսումնասիրություններ-

ը համարվում են նաև բժշկական ոլորտի խնդիրներ: Անդրադառնալով արդեն իսկ խանգարման դրսևորումներին՝ մեզ առավել հետաքրքրում է DSM VI TR–ում ներառված սեռային նույնականացման խանգարման ախտորոշիչ խմբերը, որում առանձնացված է **Ա** չափանիշը, ինչը ուժեղ և կայուն նույնականացումն է հակառակ սեռի հետ, և ոչ թե հակառակ սեռին բնորոշ մշակույթային առավելություններ ունենալու ցանկություն:

Երեխաների շրջանում խանգարումն արտահայտվում է թվարկված դրսևորումներից նվազագույնը չորսով՝

• պարբերական ցանկության արտահայտում հակառակ սեռ դառնալու, կամ պնդում լինելու հակառակ սեռի ներկայացուցիչ.

• տղաների շրջանում հակառակ սեռի հագուստների նախընտրություն կամ կանացի հագուստի նմանակում, աղջիկների շրջանում՝ միայն կարծրատիպային հագուստ կրելու պնդում.

• դերային խաղերում հակառակ սեռի դերերի մշտական նախընտրություն կամ հակառակ սեռի լինելու մշտական ֆանտազիաներ.

• հակառակ սեռին բնորոշ խաղերին և զբաղմունքներին մասնակցության բուռն ցանկություն.

• հակառակ սեռի խաղընկերների արտահայտված նախընտրություն:

Դեռահասների և մեծահասակների շրջանում **Ա** չափանիշով խանգարումն արտահայտվում է հետևյալ ախտանիշներով՝

• հակառակ սեռի լինելու ցանկություն,

• հաճախակի ներկայացում իբրև հակառակ սեռի ներկայացուցիչ,

• հակառակ սեռի նման ապրելու ցանկություն կամ նման վերաբերմունք ստանալու ցանկություն,

• հակառակ սեռին բնորոշ զգացմունքներ և հակազդումներ ունենալու խոստովանություն:

Բ չափանիշով խանգարումը դրսևորվում է սեփական սեռի նկատմամբ մշտական անհարմարության կամ սեռային դերի հետ անհամապատասխանության զգացումով:

Երեխաների շրջանում խանգարումը արտահայտվում է ներքոհիշյալ թվարկումներից որևէ մեկով.

• պնդումներ տղաների շրջանում, որ իր սեռանդամը և ամորձիները զզվելի են կամ պետք է անհետանան, կամ պնդումներ, որ ավելի լավ կլիներ սեռանդամ չունենալ,

• խուսափում կոպիտ մրցակցային խաղերից և մերժում արական խաղալիքներին, խաղերին, զբաղմունքներին:

Աղջիկների շրջանում՝ հրաժարվում են նստած դիրքով միզել, ցանկություն, որ ունենան սեռանդամ, դաշտան և զարգացած կրծքագեղձեր չունենալու ցանկություն, խուսափում նորմատիվ իգական հագուստից:

Բ չափանիշով խանգարումը դեռահասների և մեծահասակների շրջանում արտահայտվում է առաջնային և երկրորդային սեռական հատկանիշների հետ պայքարելու ձգտումով կամ համոզմունք, որ ինքը սխալ սեռով է ծնվել:

Գ չափանիշով խանգարումը չի համընկնում ֆիզիկական ինտերսեռական վիճակի հետ:

Դ չափանիշով խանգարումը առաջացնում է կլինիկորեն նշանակալի դիսթրես կամ սոցիալական, աշխատանքային կամ գործունեության այլ ոլորտի խաթարում [10]:

Հոգեբանական վերլուծությունները այս խնդրի առնչությամբ մեզ առավել են հետաքրքրում նկախված սեռային նույնականացման խանգարման արտահայտվածությունից՝ Վ. Ե. Կագանը տարանջատում է՝

1. հարմարվողական ռեակցիայով ուղեկցվող մասկուլինության և ֆեմինինության համահարաբերակցության անհատական ձևը.

2. սեռադերային կոնֆլիկտ, որը դրսևորվում է անձնային մակարդակում նևրոտիկ տիպի հակազդման ձևով որպես իրական կամ թվացող անհամա-

պատասխանություն սեռադերային չափանիշներին.

3. սեռային նույնության կոնֆլիկտ, որպես ակտիվ, գիտակցված հակադրություն, երբ զգում է իրեն հակառակ սեռի ներկայացուցիչ: Անձնային հակազդման ձևը, ընդ որում, կրում է ուղղորդված ակտիվ հարմարվողական բնույթ, և հակված են օրինականացնել հակառակ սեռի պատկանելիության ապրումը [2, էջ150]:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև Գ. Մ. Վասիլչենկոյի հոգեսեռական զարգացման խանգարումների ուսումնասիրմանը, որտեղ նա քննարկում է սեռադերային վարքի փոխակերպում հասկացությունը, համաձայն որի թեև պահպանված է սեռային ինքնագիտակցությունը, սակայն ձևավորվում է սեռադերային վարք, որը հատուկ է հակառակ սեռին:

Սեռադերային վարքի փոխակերպման ժամանակ սեռային ինքնագիտակցության խանգարումը ախտոգեն գործոնի համար միայն ֆոն է դառնում: Հիմնականում այն հիմնավորում է ծնողների դաստիարակության աղավաղումով, երբ երեխային վերաբերվում են որպես հակառակ սեռի ներկայացուցիչ, ինչպես նաև ընտանիքում առկա սեռական դերերի խանգարումով (հեղինակություն և գերակայություն վայելող մայր, ենթարկվող հայր, անլիարժեք ընտանիքներ, որտեղ մայրը տղային մեծացնում է կանացի սկզբունքներով, իսկ աղջիկների դեպքում, երբ բացակայում է մայրական սերը, որի արդյունքում առաջանում է կնոջը ոչ հատուկ ագրեսիվություն, կոպտություն):

Այսինքն՝ նա սեռադերային վարքի փոխակերպումը բացատրում է հոգեբանական խանգարումներով և փորձում է համեմատել տրանսսեքսուալության հետ: Հիմնական տարբերակիչ հատկանիշը առանձնացնում է այլ սեռին պատկանելիության զգացողությունը, որը բնորոշ է տրանսսեքսուալությանը:

Նա գտնում է, որ սեռադերային խանգարումը սկսվում է դերային խաղերում, երբ աղջիկը խաղում է ավտոմեքենաներով, կռվում է տղաների հետ, վերցնում է հոր, ամուսնու կամ եղբոր դեր: Տղաները ավելի փափուկ, կանացի դերեր են ընտրում, խուսափում են կոնֆլիկտներից:

Նա գտնում է, որ սեռադերային խանգարումների ժամանակ ձգտում են հակառակ սեռի հագուստների. սրանով արտահայտվում է ձգտումը հակառակ սեռին, չնայած ինքնանույնացումը պահպանված է, և առկա չէ սեքսուալ գունավորում: Այս խանգարումների դեպքում իգական սեռի ներկայացուցիչները անտարբեր են իրենց սեռի նկատմամբ կամ դրսևորում են նեգատիվ վերաբերմունք և չունեն ընդհանուր հետաքրքրություններ: Քանի որ խանգարված չէ սեռային ինքնագիտակցությունը, իրենց կին են զգում և չեն ամաչում սեփական մարմնից, սակայն շփվում են միայն հակառակ սեռի հետ, և վարքում տղայական ոճ է գերակայում, կառուցում են միայն ընկերական փոխհարաբերություններ, որի արդյունքում հոգեսեքսուալ զարգացումը հապաղում է: Արական սեռի հետ միայն գործնական շփում են հաստատում և սեռերի փոխհարաբերությունը ընկալում են որպես մեղք: Շատ դեպքերում, քանի որ խոչընդոտները բացակայում են, հակառակն է լինում, սեռադերային փոխակերպումների դեպքում շուտ են մտնում սեռական կապի մեջ, որը սկսվում է դեռահասության փուլից [8]:

Մենք ընդունում ենք այն մոտեցումները, որ սեռադերային դեստրուկցիաները ձևավորվում են սոցիալիզացիայի անբավարար պայմաններում, երբ խաթարվում է նույն սեռի կերպարի հետ հուզական կապվածությունը, ընդօրինակման գործընթացը, անբավարար են սեռային նույնացման գործընթացին նպաստող փոխհարաբերությունները, հաղորդակցման ձևերը: Սեռադերային նույնականացման դեստրուկցիաները սեռահասունացման գործընթացով պայ-

մանավորված վառ սկսում են դրսևորվել դեռահասության փուլում, և ի հայտ են գալիս սեռին ոչ համարժեք վարքային և դերային դրսևորումներ:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մեր կատարված հետազոտության մեջ ներգրավվել ենք արդեն իսկ ընտրված որպես սեռադերային դեստրուկցիաներ ունեցող թվով 51 ուշ դեռահասության փուլի 13–15 տարեկան ներկայացուցիչների, որից՝ 28 աղջիկ և 23 տղա: Հետազոտությունն իրականացվել է Առողջության և կրթության հայկական կենտրոնի հոգեբանական ծառայության բաժնի, Երևանի, Գյումրու, Վանաձորի այլընտրանքային վերականգնողական կենտրոնների, ՀՕՖ–ի, Օրրանի, ՍՈՍ մանկական գյուղերի, Երևան և Աբովյան քաղաքների 106, 134, 164, 10,4 դպրոցների դեռահասների շրջանում:

Իրականացված Ֆ. Գուդինաֆի ինքնանկար պրոյեկտիվ մեթոդիկայի մոդիֆիկացված տարբերակի համաձայն՝ իգական սեռի ներկայացուցիչների մոտ բարձր ցուցանիշներով է արտահայտվել սեռին համարժեք նույնականացման օբյեկտի բացակայությունը (82%): Սեռին համարժեք վարքի մերժումը՝ 85% և դերի մերժումը՝ 80% նույնպես բարձր ցուցանիշներով է արտահայտվել: Սեփական սեռի տարբերակվածության բացակայության սանդղակի ցուցանիշները կազմել են 82%, այսինքն՝ իգական սեռի ներկայացուցիչը նշում է, որ ինձ համար տարբերություն չկա՝ տղա եմ, թե աղջիկ. ես չգիտեմ տղայի և աղջկա միջև տարբերությունը: Նշում են, որ իմ սեռը միայն իմ մարմինն է:

Ուշ դեռահասության արական սեռի ներկայացուցիչների մոտ բարձր ցուցանիշներով է արտահայտվել սեփական սեռին ոչ համարժեք նույնականացման օբյեկտի 83%–ը: Սեռին համարժեք վարքի և դերի մերժումը արտահայտվում է 80% ¨ 73%: Բարձրացված է «ես»–ի վրա կենտրոնացվածությունը, վարքային դրսևորումները, ժեստերը, վերբալ և պարավերբալ հաղորդակցության ձևերը, ինչպես նաև արտաքին տեսքի նկատմամբ վերաբերմունքը խստորեն մշակվում և վերահսկվում է, որը միտված է հակառակ սեռի դրսևորումներին համապատասխանեցնելուն:

Ի համեմատ իգական սեռի՝ արական սեռի ներկայացուցիչների մոտ բարձր ցուցանիշներով է արտահայտվել նաև սեփական սեռին համարժեք նույնականացման օբյեկտի նկատմամբ բացասական հուզականությունը (83%): Սեռադերային նույնականացման առումով նույն սեռի ծնողը դեռահաս տղաների համար բացասական երանգավորմամբ է ընկալվում և նույնականացումը տեղափոխվում է հակառակ սեռի հոգատար, իրեն ընդունող կերպարի վրա: Նույն սեռի խաթարված նույնականցման օբյեկտ հանդիսացող ծնողական կերպարի նկատմամբ սեռադերային խանգարում ունեցող դեռահասները արտահայտում են տարաբնույթ զգացողություններ՝ վախ, տագնապ, ատելություն, ագրեսիվություն, կերպարի լիարժեք մերժում և ժխտում:

Մեր կատարված հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ սեռահաունացման փուլում սեռադերային նույնականացման դեստրուկցիաները դրսևորվում են սեռին համարժեք նույնականացման օբյեկտի բացակայության կամ սեփական սեռին ոչ համարժեք նույնականացման օբյեկտի առկայության պայմաններում, ինչպես նաև արտահայտվում է սեփական սեռին համարժեք նույնականցման օբյեկտի նկատմամբ բացասական հուզականությամբ, սեռին համարժեք վարքի և դերի մերժումով, ուստի կարևորվում է սեռադերային նույնականցման դեստրուկցիաների կանխարգելման նպատակով իրականացնել հատուկ կազմակերպված հոգեբանական թրեյնինգներ ծնողների շրջանում նպաստելու համար երեխաների մոտ նույնականացման օբյեկտի համարժեքությանը, սեռային համարժեք վարքի և դերի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Ս. Խուդոյան Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Եր., Զանգակ – 97, 2004. – 248 էջ:
2. Ильин Е. П. Пол и гендер. – СПБ.: Питер, 2010. – 688 с.
3. Исаев Д. Н., Каган В. Е. - Половое воспитание и психогигена пола у детей. – Л.: Медицина, 1979. – 184 с.
4. Гамезо М. В., Петрова Е. А., Орлова Л. М. - Возрастная и педагогическая психология: М.: 2003. – 512 с.
5. Каган В. Е. Воспитателю о сексологии. Педагогика. М., 1991.
6. Колесов Д. В., Сельверова Н. Б. Физиолого-педагогические аспекты полового созревания. М., «Педагогика», 1978. - 224 с.
7. Кон И. С. - Введение в сексологию. – М.: Медицина. 1989.- 336 с.
8. Сексопатология: справочник / под ред. Г. С.Василченько. 1990. – М., Медицина, с. 576.
9. Формирование личности в переходный период: от подроскового к юношескому возрасту / Под ред. Дубровиной. М.: Педагогика, 1987. – 184 с.
10. American Psychiatric Assosiation. 2005. Diagnostic and Statistical Manual of mental Disorders. Washington, DC: Am. Psychiatr. Assoc. 4th ed., text. Rev

ПРОЦЕССЫ ПОЛОВОГО СОЗРЕВАНИЯ И ПРОЯВЛЕНИЯ ДИСТРУКЦИИ В СЕКСУАЛЬНО-РОЛЕВОЙ ИДЕНТИФИКАЦИИ В ПОДРОСТКОВОМ ПЕРИОДЕ

ЛИЛИТ ХАЧАТРЯН

Психолог, Ассоциация Врачей «Шведакан Апавен»

В статье обсуждена важность процессов полового созревания в формировании половой идентификации сексуально-ролевого поведения. Обсуждены особенности проявления диструкции сексуально-ролевой идентификации в условиях неадекватной половой социализации в период полового созревания представителей разных полов.

PROCESSES OF SEXUAL PUBERTY AND DESTRUCTIVE MANIFESTATION OF SEXUAL IDENTIFICATION IN TEENAGER PERIOD

LILIT KHACHATRYAN

Psychologist at "Swedish Support" Medical Association

The importance of sexual puberty processes for formatting sexual self conciousness and sexual behaviour are discussed in the article. The peculiarities of distructive manifistation of sexual idendification during puberty period in insufficient gender socialization conditions are presented by the author.